

## Աստղիկ Հակոբյան

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ (ՀՕԿ) ՊԱՐՍԿԱՍՏԱՆՅԱՆ ՃՅՈՒՂԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ

Հայաստանի օգնության կոմիտե, պարսկաստանյան ճյուղեր, Խորհրդային Հայաստան,  
պարսկահայություն, հայ համայնք, մշտական կապ, նյութական օգնություն

Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) հիմնադիր ժողովը տեղի ունեցավ 1921 թ. սեպտեմբերի 13-18-ը Երևանում: Կոմիտեի կանոնադրության նախագիծը միաձայն ընդունվեց 1921 թ. սեպտեմբերի 14-ին՝ Երևանում տեղի ունեցած ՀՕԿ-ի հիմնադիր ժողովի երկրորդ նիստի ժամանակ, որը նախագահում էր Արամայիս Երզնկյանը: Կոմիտեի անվան մասին համառոտ մտքերի փոխանակությունից հետո միաձայն ընդունվեց հետևյալը՝ կոմիտեն անվանել Հայաստանի օգնության կոմիտե<sup>1</sup>: Սեպտեմբերի 15-ի երեկոյան ՀՕԿ-ի կանոնադրությունը ներկայացվեց ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարների խորհրդին, որը նույն երեկո քննության ենթարկելով կանոնադրությունը՝ ամնշան փոփոխություններով հաստատեց այն<sup>2</sup>:

ՀՕԿ-ը սկզբում հիմնվեց գլխավորապես սովոր դեմ պայքարելու համար, իսկ 1922 թ. հուլիսին Երևանում տեղի ունեցած համագունարի ժամանակ մշակվեց և հաստատվեց նոր կանոնադրություն, որի մեջ ուղենչված էր երկու հիմնական նպատակ՝ պատերազմական աղետներից տնտեսապես քայլապահ Հայաստանի վերաշինություն և սովոր ազգաբնակչությանը օգնության տրամադրում: Այդ նպատակներին հասնելու համար նախատեսվում են որոշակի միջոցներ: Նյութական առումով կոմիտեն հույսը դրել էր արտասահմանյան հայկական գաղթօջախների վրա, որովհետև Հայաստանի բնակչությունը տնտեսապես մեծ կորուստներ էր կրել, իսկ գաղթօջախների հայության մի մասը գերծ էր մնացել արշավանքներից և աղետներից<sup>3</sup>:

ՀՕԿ-ը ցանկանում էր համախմբել երկրից դուրս գտնվող հայ մտավորականության ու կարող այլ ուժերը Հայաստանի օգնության գաղափարի շուրջ և կապել նրանց խորհրդային Հայաստանի հետ: Իր նպատակների իրականացման համար ՀՕԿ-ի Երևանի կենտրոնական վարչությունը կարճ ժամանակամիջոցում մասնաճյուղեր հիմնեց ԽՄԴՀ-ի գրեթե բոլոր հայաշատ քաղաքներում, ինչպես նաև Հունաստանում, Բուլղարիայում, Ռումինիայում, Ֆրանսիայում, Պարսկաստանում, Եգիպտոսում, Ալժիրում և այլուր<sup>4</sup>:

<sup>1</sup> Տես Հայաստանի ազգային արխիվ (հետայսու՝ ՀԱԱ), ֆ. 178, գ. 1, գ. 2, թ. 22:

<sup>2</sup> Տես ՀԱԱ, ֆ. 178, գ. 1, գ. 2, թ. 23:

<sup>3</sup> Տես ՀԱԱ, ֆ. 178, գ. 1, գ. 19, թթ. 58 և շրջ:

<sup>4</sup> Տես Հայ սփյուռք համրագիտարան, Երևան, 2003, էջ 691:

Պարսկաստանում Խորհրդային Հայաստանի լիազոր ներկայացուցչության ու հյուպատոսությունների և նրանց շուրջը խմբված, այսպես կոչված, «առաջադիմական» ուժերի ջանքերի շնորհիվ մասնաճյուղեր էին ստեղծվել դեռևս 1922 թվականին<sup>1</sup>:

Սույն հոդվածում փորձ է արվել ներկայացնել Հայաստանի օգնության կոմիտեի պարսկաստանյան ճյուղերից առավել նշանավոր չորսի՝ Թեհրանի, Թավրիզի, Ռաշտի ու Էնգելիի հիմնադրման նպատակը և սկզբնական շրջանում ծավալած գործունեությունը:

ՀՕԿ-ի պարսկաստանյան մասնաճյուղերի առաջնեկը Թեհրանի ՀՕԿ-ն էր:

1922 թ. փետրվարի 5-ին Թեհրանի Հայ ակումբի դահլիճում կայացավ մոտ 70 հոգուց բաղկացած ժողով՝ ՀՕԿ ստեղծելու նպատակով, որին մասնակցում էին տեղական հասարակության մեջ իրենց հասարակական դիրքով փոքրիչատե հայտնի ներկայացուցիչներ՝ առանց կուսակցական խտրականության: Ժողովը քվեարկությամբ ՀՕԿ-ի վարչության անդամներ ընտրեց հետևյալ անձանց՝ ք. Յարությունյան, Մեթ Ներսիսյան, Տիգրան Տեր-Յակոբյան, Զիբրայիլ Բուղադյան, Յովսեփ Խան Ղարախանյան, Ալբերտ Տեր-Յովհաննիսյան, Հայր Արգար, տիկին Քովանյան, տիկին Վ. Պետրոսյան: Անձնափոխանորոշներ ընտրվեցին Աղայանը, Ավետիս Խան Տեր-Գրիգորյանը և տիկի. Ե. Միքայելյանը: Վեհսկողգիշ հանձնաժողովի անդամներ ընտրվեցին Ռ. Մովսիսյանը, Յ. Ավագյանը և Ն. Բժշկյանը, անձնափոխանորդ՝ Զաքարիա Յովսեփյանը:

Փետրվարի 16-ի նիստում Հայ օգնության Թեհրանի կոմիտեն ունեցավ հետևյալ վերջնական կազմը՝ ք. Յարությունյան (նախագահ), Ա. Աղայան (քարտուղար), Ա. Տեր-Յովհաննիսյան (գանձապահ), տիկ. Վ. Պետրոսյան, Հայր Արգար, Զ. Բուղադյան, Մեթ Ներսիսյան, Ա. Տեր-Գրիգորյան, Տ. Տեր-Յակոբյանը:

1923 թ. հուլիսի 30-ին Հայաստանի օգնության կենտրոնական կոմիտեի դիվանին հղած Թեհրանի ՀՕԿ-ի գործության մեջ նշվում էր, որ Հայաստանի օգնության Թեհրանի կոմիտեն (ՀՕԹԵԿ) հիմնվեց Խորհրդային Հայաստանից հասնող ծանր լուրերին ժամանակին արձագանքելու, նրա ազգաբնակչության ֆիզիկական պահպանման և տնտեսական կյանքի վերաշնուրական գործին օժանդակելու նպատակով, Պարսկաստանում Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչ Լևոն Սարգսյանի ջանքերով<sup>2</sup>:

Սկսելով իր գործունեությունը մայրաքաղաքում՝ կոմիտեն մի շաբթ նույնանման մարմինների ստեղծման նախաձեռնող դարձավ պարսկահայ գաղթօջախի այլ բնակվայրերում, որոնց մի մասն անկախ, մյուս մասն էլ Հայաստանի օգնության Թեհրանի կոմիտեի միջոցով ժամանակին չխնայեցին իրենց ջանքերը՝ օգնելու Հայաստանի սովորական և նրա սերմազուրկ գյուղացիությանը<sup>3</sup>:

Մի շաբթ պատճառներից ելնելով՝ ՀՕԹԵԿ-ը ստիպված էր գործել խիստ գգույշ և փոխգիջումներով: Այդ պատճառով էլ ուղարկվող դրամները ստիպված էին

<sup>1</sup> Տես Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, Երևան, ՀԱՍՏ ԳԱ հրատ., 1967, էջ 569:

<sup>2</sup> Տես ՀԱՏ, ֆ. 178, գ. 1, գ. 44, թ. 1:

<sup>3</sup> Տես ՀԱՏ, ֆ. 178, գ. 1, գ. 47, թ. 38:

<sup>4</sup> Տես ՀԱՏ, ֆ. 178, գ. 1, գ. 47, թ. 38 շոշ.:

Հայաստան հասցնել ոչ թե ՅՕԿ-ի, այլ Մերձավոր Արևելքում ամերիկյան նպաստամատուց կոնխտեի (Ռելիեֆի) օգնությամբ<sup>1</sup>:

1922 թվականի մարտի վերջին ՅՕԹԵԿ-ը ամերիկյան Ռելիեֆի միջոցով Հայաստան է ուղարկել 10 000 դրամ, իսկ նույն թվականի մայիսին՝ 31 000 դրամ<sup>2</sup>:

1923 թ. հուլիսի 30-ին Հայաստանի Օգնության կենտրոնական կոնխտեի դիվանին հղած ՅՕԹԵԿ-ի գրությունից պարզ է դառնում, որ նրանց չի հաջողվել Երևանի Ռելիեֆի նասնաճյուղից ծեռք բերել վերոհիշյալ գումարների ստացականներ. միայն վավերաբերեք են ստացվել նրա Թավրիզի ներկայացուցչից, որի միջոցով ուղարկվել են գումարները: Գրության մեջ փաստվում էր, որ այդ գումարներն ուղարկվել են Պարսկական Ալտրպատականից Հայաստան սերմացու հասցնելու համար<sup>3</sup>: Գրության մեջ նշվում է, որ Պարսկաստանի տնտեսական տագնապի, պարսկահայ հասարակական-մշակութային հաստատությունների նյութական և բարոյական ծանր վիճակի և նի շարք այլ պատճառներով պարսկահայությունը՝ ընդհանրապես, և Թեհրանի հայությունը՝ մասնավորապես, չկարողացան ավելի լայն չափերի հասցնել այդ օգնությունը<sup>4</sup>:

Խորհրդային Հայաստանի հետ մշտական կապ պահպանելու, պարսկահայության հետաքրքրությունը հայրենիքի նկատմամբ վառ պահելու համար խնդրվում էր Պարսկաստան ուղարկել տեղեկագրեր և հրատարակություններ ՅՕԿ-ի գործունեության, օգնության գործններացի, Խորհրդային Հայաստանի տնտեսական կարիքների և կացության վերաբերյալ<sup>5</sup>:

Գրության մեջ փաստվում էր նաև ՅՕԹԵԿ-ի լուժարման մասին, նշվում, որ անհրաժեշտության դեպքում ՅՕԿ-ի պահանջով և տեղական պայմանների թույլտվությամբ ՅՕԹԵԿ-ը պատրաստ է հետագայում շարունակել իր գոյությունը և համեստ գործունեությունը<sup>6</sup>: Այդպես էլ եղավ:

1924 թ. նոյեմբերի 2-ին երեկոյան ժամը 6-ին, Հայկական ակումբում տեղի ունեցավ ՅՕԿ-ի Թեհրանի ճյուղի ընդհանուր ժողով: Ժողովի նախագահ միաձայն ընտրվեց Զ. Բուդայյանը, իսկ քարտուղարներ՝ Տիգրան Տեր-Հակոբյանը և Ս. Սարհատյանը<sup>7</sup>: Ժողովում ընտրվեց ՅՕԿ-ի Թեհրանի ճյուղի վարչություն՝ բաղկացած 9 անդամից՝ Երվանդ Մովսիսյան, Նվարդ Մասումյան, Հովսեփ Միրզայան, Վարդան Հովհաննիսյան, Սիմոն Հովյան, Տիգրան Տեր-Հակոբյան, Ալեքսան Թունյան, Սիմոն Սիմոնյան և Ալ. Ֆրենդյան<sup>8</sup>: Ընտրվեցին նաև երկու փոխանդամներ՝ Ալեք Հովհաննիսյան և Լևոն Թադևոսյան<sup>9</sup>:

<sup>1</sup> Առավել մամրամասն տես ՀԱԱ, ֆ. 178, գ. 1, գ. 47, թթ. 38 շրջ.-39:

<sup>2</sup> Տես ՀԱԱ, ֆ. 178, գ. 1, գ. 47, թ. 39 շրջ.:

<sup>3</sup> Տես ՀԱԱ, ֆ. 178, գ. 1, գ. 47, թ. 40:

<sup>4</sup> Տես ՀԱԱ, ֆ. 178, գ. 1, գ. 47, թթ. 41 և շրջ.:

<sup>5</sup> Տես ՀԱԱ, ֆ. 178, գ. 1, գ. 47, թթ. 42 և շրջ.:

<sup>6</sup> Տես ՀԱԱ, ֆ. 178, գ. 1, գ. 47, թթ. 41 շրջ.-42:

<sup>7</sup> Տես ՀԱԱ, ֆ. 178, գ. 1, գ. 409, թ. 3:

<sup>8</sup> Տես ՀԱԱ, ֆ. 178, գ. 1, գ. 409, թ. 3 շրջ.:

<sup>9</sup> Տես ՀԱԱ, ֆ. 178, գ. 1, գ. 409, թ. 4:

1925 թ. հունվարի 29-ին Հայաստանի Օգնության Թեհրանի կոմիտեի՝ Հայաստանի Օգնության կենտրոնական կոմիտեին ուղարկված գրությունը փաստում է, որ Հայաստանի օգնության Թեհրանի կոմիտեն կազմվեց 1924 թ. նոյեմբերի 2-ին՝ Ս. Առաքելյանի նախաձեռնությամբ, քարտուղարներն էին Ս. Սիմոնյանը և Եր. Մովսիսյանը, գանձապահը՝ Ն. Մասումյան հաշվապահը՝ Ալ. Ֆրենդյանը: Մյուս անդամներն էին Հովսեփ Միրզայանը, Տիգրան Տեր-Հակոբյանը, Սիմոն Հովովյանը, Ալ. Թումյանը և Վարդան Հովհաննիսյանը<sup>1</sup>: Գրության մեջ նաև նշվում էր կոմիտեի 96 անդամներ ունենալու, ինչպես նաև այդ թվականից նոր անդամներ ավելացնելու փաստը:

Կոմիտեն ուներ դպրոց և դպրոցին կից գրադարան-ընթերցարան: Դպրոցը երկսեռ էր, վեցդասյա, որը պահպում էր անշարժ կայքերի հասույթներով, կտակված դրամների տոկոսներով, զանազան ծեռնարկումների եկամուտով և թոշակով: Չնայած դրամ՝ դպրոցն ամեն տարի ունենում էր բյուջեի խոշոր պակասորդ: Զգացվում էր դասագրքերի կարիք, որն իր հետևանքն էր թողնում դպրոցական աշխատանքների վրա:

Կոմիտեն ուներ կնիք՝ «Հայաստանի Օգնութեան Թեհրանի Կոմիտե» անվամբ<sup>2</sup>:

Պարսկաստանի մեկ այլ հայաշատ քաղաքում՝ Թավրիզում, համաձայն Հայաստանի Օգնության կենտրոնական կոմիտեի առաջարկության, ՀՍԽՀ Ալտրպատականի ընդհանուր հյուպատոս Եզեկ Երզնկյանը Արամյան թատրոնի սրահում 1922 թ. ապրիլի 21-ին երեկոյան ժամը 5-ին հրավիրեց հայ համայնքի բազմամարդ ժողով՝ քննարկելու Հայաստանի սովյալների կացությունը և Թավրիզում նրանց օգնություն կազմակերպելու հարցը: Հատուկ ցուցակով հրավիրված էին Թավրիզի հայության բոլոր հոսանքներին ու խավերին պատկանող անհատներ. ժողովին ներկա էր մոտ 80 հոգի:

Ե. Երզնկյանը խոսեց մտահոգող խնդիրների մասին, ապա կարդաց Հայաստանի Օգնության կենտրոնական կոմիտեի դիմումը, որտեղ կոչ էր արվում Թավրիզում օգնության կոմիտե կազմակերպել<sup>3</sup>:

Ժողովական Վարդան Հովհաննիսյանը օգնության գործը կազմակերպելու համար պահանջեց Թավրիզի հայ համայնքի ընդհանուր ժողով գումարել: Ժողովականներից ոմանք, ինչպես նաև Ե. Երզնկյանը բացատրեցին, որ Պարսկաստանի այդ ժամանակվա քաղաքական պայմաններում, երբ ռազմական դրություն էր տիրում, հնարավոր չէր ընդհանուր ժողով գումարել, իսկ օգնության գործը շուտափույթ կազմակերպելու համար անհրաժեշտ էր բավարարվել գաղութի բոլոր խավերը ներկայացնող բազմամարդ այդ ժողովով:

Նախագահության առաջարկով ժողովը կոմիտե կազմելու համար առաջարկեց հետևյալ թեկնածուներին՝ Զաքարիա Նազարբեկյան, Յեղինե Առուստամյան, Արիստակես Օհանյան, Ստեփան Խան Եղիազարյան, Երվանդ Հարությունյան,

1 Տես ՀԱԱ, ֆ. 178, գ. 1, գ. 109, թ. 25:

2 Տես ՀԱԱ, ֆ. 178, գ. 1, գ. 109, թ. 26:

3 Տես ՀԱԱ, 178, գ. 1, գ. 1, թ. 41:

Առաքել Հարությունյան, Արամ Բուդաղյան, Ներսես Ներսիսյան, Թովմաս Օհանյան, Սամսոն Բուդաղյան, Առաքել Պատմագրյան, Հակոբ Ավագյան, Տիգրան Խան Գորոյան, Սարգիս Մելիք-Ազարյանը, Այծեմնիկ Մելիք-Ազարյան և Հեղինե ժորժ<sup>1</sup>:

Ժողովականներից քվեարկությանը մասնակցեցին 64 հոգի: Ժողովի կողմից ընտրված հանձնաժողովը՝ մասնակցությամբ Հակոբ Ավագյանի, Լևոն Մելիք-Ազարյանի և Անդրեաս Պետրոսյանի, գտավ, որ ըստ ստացած ձայների քանակի՝ կոմիտեի վարչության անդամներ են ընտրվում հետևյալ 11 հոգին՝ Հեղինե Առուստամյան, Ստեփան Խան Եղիազարյան, Հակոբ Ավագյան, Երվանդ Հարությունյան, Զաքարիա Նազարբեկյան, Սամսոն Բուդաղյան, Հեղինե ժորժ, Առաքել Պատմագրյան, Այծեմնիկ Մելիք-Ազարյան, Արամ Բուդաղյան, Սարգիս Մելիք-Ազարյան: Այսպիսով, կազմակերպում է Հայաստանի օգնության Թավրիզի կոմիտեն՝ բաղկացած 11 հոգուց<sup>2</sup>:

1922 թ. ապրիլի 30-ին վերաբերող արխիվային փաստաթղթից, որի մեջ ներբերված է Հայաստանի Օգնության Թավրիզի կոմիտեի կոչը՝ ուղղված Ասրապատականի հայությանը, պարզ է դառնում, որ Հայաստանի Օգնության Թավրիզի կոմիտեի նախագահն էր Հակոբ Ավագյանը, փոխնախագահը՝ Ստ. Եղիազարյանը, գանձապահը՝ Ս. Բուդաղյանը, քարտուղարը՝ Ե. Հարությունյանը: Կոմիտեի վարչության անդամներն էին Յ. Առուստամյանը, Ա. Մելիք-Ազարյանը, Յ. ժորժը, Ա. Բուդաղյանը, Ս. Մելիք-Ազարյանը, Ար. Պատմագրյանը, Թ. Օհանյանը<sup>3</sup>: Ինչպես նշվեց, Թ. Օհանյանի անունն առկա էր առաջ քաշված թեկնածուների շարքում, սակայն չկար կոմիտեի՝ քվեարկությամբ ընտրված վարչության անդամների ցանկում: Այդ փաստերը, որոնք քաղված են 1922 թ. ապրիլի 22-ով թվագրված արխիվային փաստաթղթից<sup>4</sup>, խոսում են այն մասին, որ ընդամենը ութ օր անց Զաքարիա Նազարբեկյանի անդամությունը կոմիտեին փոխարինվում է Թ. Օհանյանի անդամությամբ:

Այս կոմիտեն գործի անցավ՝ վստահ լինելով Ասրապատականի հայության լայն խավերի ջերմ հայրենասիրությանը<sup>5</sup>: 1922 թ. ապրիլի 30-ին Թավրիզի ՀՕԿ-ը հատուկ կոչով դիմեց Ասրապատականի հայությանը: Կոչում նաև ավորապես ասվում էր. «.... մենք լիայոս ենք, որ նա (Ասրապատականի հայությունը - Ա. Յ.) ինչպես միշտ, այնպես էլ այժմ ոչ մի միջոց ու ջանք չի խնայի ջերմ արձագանք տալու սոված ու քայլաքայլած Հայաստանի օգնութեան կոչին»<sup>6</sup>:

Հայաստանի Օգնության կոմիտեի ընդիհանուր համագումարին ներկայացրած Հայաստանի Օգնության Թավրիզի կոմիտեի գեկուցումից պարզ է դառնում, որ իր գործունեության առանցքը համարելով նյութական օգնությունը Հայաստանին՝ դրամով, մետրով, ապրանքով և այլն, կոմիտեն կազմակերպվելուց անմիջպես հետո ձեռնամուխ է լինում դրամական հասույթներ ստեղծելու գործին:

<sup>1</sup> Տես ՀԱԱ, 178, գ. 1, գ. 1, թ. 41 շրջ.:

<sup>2</sup> Տես ՀԱԱ, ֆ. 178, գ. 1, գ. 1, թթ. 41 շրջ. և 42:

<sup>3</sup> Տես ՀԱԱ, ֆ. 178, գ. 1, գ. 1, թ. 40:

<sup>4</sup> Տես ՀԱԱ, ֆ. 178, գ. 1, գ. 1, թթ. 41 շրջ. և 42:

<sup>5</sup> Տես ՀԱԱ, ֆ. 178, գ. 1, գ. 1, թ. 40:

<sup>6</sup> ՀԱԱ, ֆ. 178, գ. 1, գ. 1, թ. 40:

Այդ նպատակով կազմակերպում է դրամի հանգանակություն Թավրիզի հայ և օտարազգի գաղութներում, ինչպես նաև մի շարք պարսիկ պաշտոնյաների շրջանում, որը կազմում է 8321,50 դրամ:

Հայարակության լայն խավերին իր գոյության մասին իրազեկելու համար կոմիտեն Թավրիզի կենտրոնական պարտեզում կազմակերպում է գրոսանք, հավաքվում է 562 դրամ գուտ եկամուտ: 1922 թ. դեկտեմբերի 7-ին կազմակերպում է շքեղ երեկովյք, որի ընթացքում ստացվում է 3356 դրամ շահույթ<sup>1</sup>:

Թավրիզի ՀՕԿ-ը, անսալով իրանահայ գյուղացիության ձգտմանը՝ վերադառնալ Հայաստան, գումար է տրամադրում նրանց: Կոմիտեն բազմիցս միջնորդել է Հայաստանի հյուպատոսարամին՝ թույլատրել Հայաստան վերադառնալ այն տարագիրներին, ովքեր այնտեղ կարող են շինարարական գործ կատարել<sup>2</sup>:

Իր գործունեությունն ավելի արգասաբեր դարձնելու համար կոմիտեն աշխատել է մշտական կապ պահպանել Օգնության կենտրոնական կոմիտեի հետ, բայց, դժբախտաբար, դա նրան չի հաջողվել. նրա շատ դիմումներ երևանի կոմիտեին՝ անպատասխան են մնացել<sup>3</sup>:

Որպես հասարակական մարմին, Թավրիզի կոմիտեն, արտահայտելով տեղի հայության ընդհանուր տրամադրությունները, 1922 թ. հուլիսին դիմում է Խորհրդային Հայաստանի կառավարությանը՝ խնդրելով պահպանել Թավրիզում Հայաստանի հյուպատոսարամը, որը թամկ է հայության համար՝ որպես ազատ և անկախ հայրենիքի ներկայացուցություն: Դիմումին ի պատասխան ստացվում է Հայաստանի կառավարության պատասխան հեռագիրը, որով նա հայտնում էր, որ հյուպատոսարանը պետք է պահպանվի: Դրանից հետո Խորհրդային Հայաստանի հյուպատոսարանը Թավրիզում գործեց ևս ուր ամիս<sup>4</sup>:

Թավրիզի կոմիտեի հիմնական նպատակը մայր հայրենիքի վերաշինության գործին օգտակար լինելն էր: Եթե այդ ուղղությամբ նա շատ բան չի կարողացել անել, պատճառը մի կողմից Թավրիզի հայ գաղութի քայլայված դրությունն էր, մյուս կողմից՝ Երևանի և Թավրիզի միջև մշտական կապի բացակայությունը<sup>5</sup>:

ՀՕԿ-ի մասնաճյուղ հիմնադրվեց նաև Ենգելիում<sup>6</sup>:

Հայաստանի Օգնության Կոմիտեի Ենգելիի մասնաճյուղը կազմվեց 1924 թ. հունիսի 25-ի և 26-ի ընդհանուր հասարակական ժողովներում՝ Ենգելիի հայ համայնական խորհրդի նախաձեռնությամբ: Այն սկսել է իր գործունեությունը հունիսի 30-ից: Վարչությունը կազմված էր հինգ հոգուց, իսկ դիվանը՝ երեք: Նախագահը Ազարիա Մնացականյանն էր, քարտուղարը՝ Գրիգոր Եղիազարյանը, գանձապահը՝ Գրիգորիս

<sup>1</sup> Տես ՀԱԱ, ֆ. 178, գ. 1, գ. 306, թ. 11:

<sup>2</sup> Տես ՀԱԱ, ֆ. 178, գ. 1, գ. 306, թ. 11 շրջ.:

<sup>3</sup> Տես ՀԱԱ, ֆ. 178, գ. 1, գ. 306, թ. 12:

<sup>4</sup> Տես ՀԱԱ, ֆ. 178, գ. 1, գ. 306, թթ. 12 և շրջ.:

<sup>5</sup> Տես ՀԱԱ, ֆ. 178, գ. 1, գ. 306, թ. 12 շրջ.:

<sup>6</sup> Քաղաք Գիլանի նահանգում (Ենգելիի մասին առավել մանրամասն տես Հայ սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003, էջ 242):

Տեր-Հովհաննիսյանը, անդամներն էին Զումշուր Ղազարյանը և Ալեք Բեջանյանը: Ենգելիի ճյուղի բոլոր անդամները՝ 84 հոգի, վճարում էին անդամավճար: Կիրառվում էր կամավոր անդամավճարի համակարգը: Ամսավճարների քանակը կամավոր էր<sup>1</sup>:

Բացի անդամավճարներից ճյուղի եկամտի աղբյուրներն էին երեկույթները, ներկայացումները, կինոյի պատահական ցուցադրությունները և այլ նման ձեռնարկներն ու պատահական եկամուտները: ճյուղը չուներ շարժական ու անշարժ գույք:

Գաղութը ուներ համեստ գրադարան, որը գտնվում էր Յամայնական խորհրդի իրավասության տակ և անմիջապես կառավարվում էր Յայկական ակումբի միջոցով: Գրադարանը պահպում էր համայնքի միջոցներով՝ հանձին Յամայնական խորհրդի: Տեղի նախկին երկդասյա դպրոցը միացված էր ռուսական դպրոցի հետ իրավական հավասար սկզբունքով՝ «Ենգելիի անվան միացյալ աշխատավորախորհրդային երկաստիճան դպրոց» անունով, որը պահպում էր հայ և ռուս գաղութների միացյալ միջոցներով:

Նոր, խորհրդային ոգի ու բնույթ կրող գրականության, ինչպես նաև դասագրքերի պահանջ էր գգացվում<sup>2</sup>:

Յայաստանի Օգնության կոմիտեի Ենգելիի ճյուղի 1925 թ. փետրվարի 20-ի թիվ 34 գրության մեջ՝ ուղղված Խորհրդային միացյալ հանրապետությունների լիազոր ներկայացուցչությանը կից հայկական գործերի քարտուղար Սուլեյն Առաքելյանին, նշումը էր, որ վարչությունը սեփական շենք չունի. աշխատանքները կատարվում են վարչության անդամների բնակարաններում և Յամայնական խորհրդի գրասենյակում<sup>3</sup>:

Վարչությունը ուներ վճարովի միայն մեկ նամակատար՝ ամսական 20 դրամ աշխատավարձով, իսկ մնացած բոլոր աշխատանքները կատարվում էին նրա անդամների ձեռքով՝ առանց որևէ դրամական վարձատրության: Կոմիտեն ուներ կնիք, իսկ դրոշմակնիք՝ ոչ:

Այդ գրությունից պարզ է դառնում այն իրողությունը, որ տեղի հայ գաղութը չափազանց աղքատ էր լուրջ պատրաստություն ունեցող ուժերի առումով, որոնք կարող էին օգրի տալ ճյուղի աշխատանքները, իսկ իրենց տրամադրության տակ գտնվող սակավաթիվ ուժերը չափազանց ծանրաբեռնված էին հասարակական բազմաթիվ ու բազմազան աշխատանքներով<sup>4</sup>: Չնայած աննպաստ պայմաններին, վարչության, այնուամենայնիվ, հաջողվել է իր անդամների թիվը հասցնել 84-ի, որը տեղի փոքր հայ գաղութի համար ստվար թիվ էր: Մասնաճյուղը շարունակ գրադարձել էր երեկույթ և այլն<sup>5</sup>:

<sup>1</sup> Տես ՀԱԱ, ֆ. 178, գ. 1, գ. 109, թ. 37:

<sup>2</sup> Տես ՀԱԱ, ֆ. 178, գ. 1, գ. 109, թ. 37 շոշ.:

<sup>3</sup> Տես ՀԱԱ, ֆ. 178, գ. 1, գ. 109, թ. 38:

<sup>4</sup> Տես ՀԱԱ, ֆ. 178, գ. 1, գ. 109, թ. 38:

<sup>5</sup> Տես ՀԱԱ, ֆ. 178, գ. 1, գ. 109, թ. 38 շոշ.:

Գիլանի նահանգում գտնվող Ռեշտ<sup>1</sup> քաղաքն էլ անմասն չմնաց ՀՕԿ ստեղծելու և հայրենիքին աջակցություն ցույց տալու գործում: Հայաստանի Օգնության կոմիտեի Ռեշտի ճյուղը կազմվել է 1924 թ. հունիսի 29-ին Հայաստանի բարեկամների միության նախաձեռնությամբ: Վարչական կազմը բաղկացած էր 7 անդամից և 3 փոխանդամից: Նախագահը Գեղամ Սարգսյանն էր, փոխնախագահը՝ Տիգրան Աճեմյանը, գանձապահը՝ Հարություն Հարությունյանը, քարտուղարը՝ Շովեսի Էլիազյանը: Անդամներն էին Աստղիկ Ովուբարյանը, Ղարաման Պետրոսյանը և Արամայիս Անանյանը<sup>2</sup>:

ճյուղի բոլոր անդամները անդամավճար էին մուծում: Դրանց թիվը սկզբում հասնում էր 80-ի: Հայաստանի օգնության կենտրոնական կոմիտեին հղած ՀՕԿ-ի Ռեշտի ճյուղի 1925 թ. հունվարի 21-ի թիվ 21 գրության մեջ նշվում է. «.... այժմ մօտաւորապէս մնացել են 60 հօգի: Պակասած անդամներից մի մասը բացակայել է քաղաքից, իսկ մի որոշ մասն էլ չցանկացան վճարել»<sup>3</sup>: Անդամավճարների չափը 1-5 դրան էր, գանձում էին երկու ամիսը մեկ անգամ: Բացի անդամավճարներից ճյուղի եկամտի աղյուրները գոյանում էին նվեր ստանալուց, երեկույթ, ներկայացում, «մի բաժակ թեյ» և այլ ծեռնարկներ իրականացնելուց<sup>4</sup>:

Գաղութն ուներ «Ս. Ա. Յորդանանեան» անունով դպրոց, որը պահպում էր Եկեղեցական անշարժ կալվածքների եկամուտով, թոշակներից և այլ ծեռնարկումներից ստացված եկամուտով: Ուներ նաև գրադարան-լնրերցարան՝ «Ս. Մեսրովիքեան» անունով, որը, դժբախտաբար, հաճախորդներ չուներ. գրքերը տանողները չէին վերադարձել, եղածներն էլ գգգված ու խայտառակ վիճակում էին. մի գրադարան, որը ժամանակին ունեցել է 5-6 հազար կտոր ընտիր գրքերի հավաքածու:

ՀՕԿ-ի Ռեշտի ճյուղի 1925 թ. հունվարի 21-ի թիվ 21 գրությունից՝ ուղղված Հայաստանի Օգնության կենտրոնական կոմիտեին, պարզ է դառնում այն իրողությունը, որ վարչությունը չուներ ոչ սեփական, ոչ էլ վարձու շենք. ժողովները տեղի էին ունենում մասնավոր բնակարաններում: ճյուղը վարձու աշխատող միայն մեկ հոգի ուներ՝ դրամ գանձելու համար (4-5 ռուբլի ամսավճարով): ճյուղն ուներ կնիք ու դրոշմակնիք<sup>5</sup>:

Ընտրվելուց անմիջապես հետո վարչությունն անցել է աշխատանքի. հավաքել է մուտքի նվերները, անդամավճարների առաջին երկամսյան և փոխադրել ՀՕԿ-ի կենտրոնին:

Վերոհիշյալ գրությունը վկայում է, որ տնտեսական ճգնաժամի հետևանքով անդամներն սկսել էին իրենց տուրքը դժվարությամբ վճարել<sup>6</sup>:

<sup>1</sup> Համբիպում է նաև Ռաշտ ծևով: (Ռեշտի մասին առավել մանրամասն տես՝ Հայ սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003, էջ 246):

<sup>2</sup> Տես ՀԱԱ, ֆ. 178, գ. 1, գ. 109, թ. 39:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 178, գ. 1, գ. 109, թ. 39:

<sup>4</sup> Տես ՀԱԱ, ֆ. 178, գ. 1, գ. 109, թ. 39 շրջ.:

<sup>5</sup> Տես ՀԱԱ, ֆ. 178, գ. 1, գ. 109, թ. 39 շրջ.:

<sup>6</sup> Տես ՀԱԱ, ֆ. 178, գ. 1, գ. 109, թ. 40:

Ռաշտի մասնաճյուղի ցանկությունը՝ անմիջական կապ հաստատել ՀՕԿ-ի կենտրոնի հետ, խարսխված էր այն անկեղծ ցանկության վրա, որ կենտրոնից ուղարկվող շրջաբերականները շուտ հասնեին Ռեշտ: Դա հնարավորություն կտար արագ տեղեկություն ստանալ կենտրոնում կատարվող աշխատանքների մասին, ինչն էլ ոգևորող ազդակ կհանդիսանար Ռեշտում կատարվող աշխատանքների համար<sup>1</sup>:

Արխիվային նյութերի հետևողական ուսումնասիրությունների արդյունքում ի հայտ է գալիս այն ծշմարտությունը, որ ՀՕԿ-ի պարսկաստանյան ճյուղերը իրենց նյութական և բարոյական օժանդակությունից երբեք չեն գրկել մայր հայրենիքը:

ՀՕԿ-ի ճյուղեր են ստեղծվել նաև Ալվազում, Նոր Ջուղայում, Ղազվինում, Նիշապուրում, Մեշհեդում, Սարգեվարում և այլուր: Սակայն նպատակ չինտապնդելով անդրադարձալ այս ճյուղերի հիմնադրմանն ու սկզբնական շրջանում ծավալած գործունեությանը՝ կրավարարվենք միայն այն փաստի արձանագրմանը, որ հիշյալ ճյուղերը ևս որոշակի նպաստ են բերել Խորհրդային Հայաստանի վերաշիննան գործին:

ՀՕԿ-ի պարսկաստանյան մասնաճյուղերի ստեղծումը և նրանց անաշառ օժանդակությունը մայր հայրենիքին նաև խորացնում և հզրացնում էր հայ ժողովրդի երկու հատվածների միջև կապը, կատարում տեղեկատվական գործառույթներ՝ պարսկահայերին իրազեկելով Հայաստանի կացության մասին, Սփյուռքը կապում հայրենիքի հետ:

**Աստղիկ Հակոբյան, Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) պարսկաստանյան ճյուղերի առաջին քայլերը – Հայաստանի օգնության կոմիտեն (ՀՕԿ) հիմնադրվեց 1921 թ. սեպտեմբերի 13-18-ը Երևանում տեղի ունեցած համագումարի ժամանակ, օրինականացվեց ՀՍԽՀ ժողովրդի սեպտեմբերի 15-ի դեկտեմբերի:**

Հայաստանի Օգնության կոմիտեն սկզբում հիմնվեց գլխավորապես սովոր հաղթահարելու համար: ՀՕԿ-ը ստեղծեց իր մասնաճյուղերը աշխարհի տարբեր երկրներում, այդ թվում Պարսկաստանում, որտեղ կար մեծաքանակ հայ բնակչություն:

Սույն հոդվածը նվիրված է Թեհրանում, Թավրիզում, Էնգելիում և Ռեշտում հիմնադրված ՀՕԿ-ի մասնաճյուղերի գործունեության լուսաբանմանը:

**Астхик Акопян, Певые шаги персидских филиалов Комитета помощи Армении (КПА) –**

( )

1921 .

15

<sup>1</sup> Տես ՀԱԱ, ֆ. 178, գ. 1, գ. 109, թ. 40:

**Astghik Hakobyan, Armenian Relief Committee's (ARC) Persian branches' first steps –** Armenian Relief Committee (ARC) was established in September 13-18, 1921, during the congress which took place in Yerevan. It was legalized by ASSR Council of People's Commissars' decree of September 15.

Armenian Relief Committee was initially established mainly to overcome famine. ARC set up its branches in different countries of the world.

ARC set up its branches in Persian cities as well where there were many Armenians. This article is dedicated to the commentary of ARC's branches in Tehran, Tabriz, Enzeli and Rasht. The establishment of ARC's Persian branches and their support to the mother country strengthens the connection between Armenian people who are in two different parts.

*Աստղիկ Հակոբյան - ԵՊՀ պատմության ֆակուլտետի դրամավարու, Դայաստանի Օգմության  
կոմիտեի (ՀՕԿ) պարսկաստանյան ճյուղի աշխատակից*

